


ՎԱՂԱՐԺԱԿ ՆՈՐԵՆՑ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ՊԵՏՐՈՎԱ — 1930 — ՅԵՐԵՎԱՆ



ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ Ե 1867 թ.

ՎԱՀԱՐԴԱԿ ՆՈՐԵՆՑ

891.99  
4-93

Խաչիկի Մշակույթը և  
գլուխացներ, - ցողու-  
թու ժամանակը

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՒՔ

(ԵՐԵՎԱՆ, ԽՈՎԻԹ-ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ)

(1923-1930)

24/5/30 Վեհաջր  
ՑԵՍԱԿԱՆ

+877  
25201  
11  
A 28901

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
1930 թ ՅԵՐԵՎԱՆ



Հրատ. № 1407

Գրառ. № 5794 (բ). Պատվ. № 952 Տիրամ 3000  
Պետհրատի յերկըորդ տպարան Յերևանում

\* \* \*

Տողերիս զասակներով մահի գեմ պբոհ գնամ,  
խեղդիմ սրտիս կոկիծը, առնական, խրոխտ գնամ,  
կյանքի հարածուն ծառից քեզ մահը պոկեց, տարավ,  
մահի դեմ հենց քո անշեղ մըմուռի հրով գնամ:

Սկսված, դեռ չավարտված անողոք մի կոփվ կա,  
ծառացել ենք հնէ դեմ, զեռ վերջին մի մըբիկ կա,  
կավարտվի մեր պայքարը՝ յերբ թշնամին ցրիվ գա,  
զուցե յես հենց այդ կովում թշնամու սրով գնամ:

Հե՞յ, կուն կովից հետո կապույտ որերը, գիտեմ,  
ու նոր պայքար կլինի իս ցավի, քո մահի դեմ.  
թեհ առանց քեզ, ախ յես կուզեցի բարկ, արնադեմ  
այդ նոր, վեհիմաստ կովում ել վորպես դրոշ գնամ:

Ինձ ել կրծում ե համառ այն ցավը, վոր քեզ տարավ,  
քեզ նման կանցնեմ յես ե՞ ապրել կովելու ծարավ,  
բայց քանի աչքս բաց ե՞ թող յերգս հոսի վարար,  
ու այս կյանքից, անուշ ջան, թող ուրախ գրով գնամ:

## Ա Բ Ե Վ Ի Ն

Հիմանդ եմ, բարի արե, շողմա, շողմա...

Մ. Մ Կ Ծ Ա Ր Ե Ա Յ

Արել բարի մի գթության քուցը,  
շողերը նրա՝ սըրսկման ասեղ...  
սըրսկիր, արե՛, կյանքի հուրը քու  
սիրտս, վոր հիմա քո զեմն եմ պարզել

Մի բաժակ տուր ինձ հեղուկից քո լուս  
հաղի գեմ, արե՛, այս չար հաղի գեմ,  
ալսքան ցանկությունն, սեր ու վոխ, մոլուցք  
կրծքիս տա՞կ պահեմ, պահեմ հաղիվ թե...

Այս փունջ ծաղիկը սեղանիս վրա...  
Ո՛, քիչ ե, արե, ո՛ քիչ ե, քիչ ե.  
գուրսը գարուն ե, կյանք ե հուրհըրան,  
այս փունջ ծաղիկը ծաղրի քըքիջ ե:

Դուրս տար ինձ, զուրս տար՝ ծաղիկների մեջ,  
լուսի, ինդության, կրքերի ծովում...  
սըրսկիր, արե, կըակ, կիրք ու տենչ,  
գուրս գամ, զուրս. կյանքը այնովե՞ս ե թովում...

■■■

ԳԱՐՆԱՐԱՅԻՆ



«ԵՐԵՎԱՆԵՐԴՈՒԹՅՈՒՆ»

Յերգում ես սբախիդ խորքից՝  
թվում ե ամեն ինչ քոնը,  
կերտված ե յերգիդ հոգին  
քո սբախ կըակովու

Թվում ե քեզ ես յերգում,  
քո խինդն ու քո կարոտը,  
յերբ սբախիդ մեջ իրիկուն  
և կամ թե առավոտ ե:

Թվում ե թե անպակաս  
սիրտն ե յերգիդ աղբյուրը,  
ու աշխարհը պապակած  
խմում ե քո ալդ ջուրը:

Մինչդեռ դու, մինչդեռ դու յես  
ծծում նրա հյութերը,  
նա այնքան խոր ազդու յե,  
քեզ անհալտ քեզ դյութել ե:

Դու գտել ես մի «յերկու»  
կլանքը ջոկ, դու իմաստն ես...  
Բայց քեզնով ում ես յերգում,  
նա ամրող ու դու մասն ես:



## ԱՆՑԱՐԱՆ ՅԵՐԳ

Յես յեկտ աղն հին կոծանով,  
ինձանով հինը վերջացավ.  
Նորը սկսվեց ինձանով.  
Նորն ու այն հինը վերջացած,  
թվում են հավասար ծանոթ:

Յես փախա պաղ լուսնի լուսից,  
յերազն խմ արեն եր հրակ,  
յերբ յելագ նա լուսն ուսից,  
դեռ խմ ցուքտ յերկրի վրա  
դոզում եր մի դաշտկ լուսին:

Արեր շիկնած բարկութիւնն,  
ինձ թվում, թվում եր թի  
լուսնին եր հետապնդում.  
լուսինն ել զժզուչն ոըլիքինել՝  
հանգչում եր անլաց, անխնդում:

Գաղաղած արեին տեսա.—  
(յես մի մանուկ, վոր ծծել եր  
մահացող լուսնի կաթը սառ),—  
զեպի լուսինը նա ցցել եր  
խուրձերով խոցող նիդակ:

Յերբ մարեց լուսինը հիվանդ—  
արդեն, արդեն բաց ցերեկ եր՝  
լուսը ամեն տեղ դիպած.  
արեվը առաջ եր յեկել,  
մենք ճամբի կեսին հանդիպանք:

Յես յեկա այն հին կածանով.  
լուսինը ինձանով վերջացավ,  
արեվը ծագեց ինձանով.  
որն ու գիշերը վերջացած  
թվում են հավասար ծանոթ:

■

A 28901 1877



## ՄՈՌ-ԱՅՈՒՄ

Հիմա մվ, մվ չի ուզում  
չիներ հինը խառնալ,  
մվ արդյոք չի յերազում  
պիտներ գառնալ:

Պիտներ, վոր լսել և  
որերի միայն մի ժիրդ,  
վարբ լսել և ուսել և  
«Ի՞նսերհացիոնալլ» սեդ:

Ո՞, լինել Հոկտեմբերիկը,  
կընքված կարմիր կնունքով,  
մանուկը հոկտեմբերի  
ծնված կավի լերկունքով:

Չունենալ և վոչ մի կապ,  
չունենալ հուշի մի թիւ  
չհիշել վոչ մի անգամ  
չոկտեմբերիցը դեն:

Այս, այնպես եմ յես ուզում  
մոռանալ հինը գառնահամ.  
այնպես, այնպես եմ յերազում  
պիտներ գառնալ:



Յ Ի Լ Բ

Մ Ա Յ Ա Խ Ե Խ Ե Խ Ա Խ Ե Խ

Կանաչ ծիլ, կանաչ ծիլ, վորպես  
մուտի կատացը՝ ձվից ծլած.  
հողը, հողը թխոկան մոք պես,  
զու զեղին ձվիկից յելած:

Արել վեր՝ Հրեթել կծիկ՝  
ձըգում և քեզ, ձըգում և քեզ,  
վոսկի մի շող ծայրը կոցիդ՝  
այդ շողն ի վեր բաշճրանում ես:

Ծիլ կանաչ, զմբուխտ անդին;  
մանկություն ջի՞նջ, անապակ,  
նոր նյութված մի նոր կլանքի  
առաջին ձե, առաջին հասակ:

Կանաչ ծիլ, աճուն ծիլ, վորպես  
հուզի շողը սրտից ցոլած,  
հողի սիրտը հուսացող մոք պես,  
զու նըա կատարումը ծլած:

«ԽԱՌԻԺ-ԱՐԵՎԱԿՈՆ»

Յես ել ձեզ պես եմ յեղել՝  
մի գող ու շրջիկ մանուկը  
ու հիմա հացի տեղը  
ձեր հույզերն եմ գողանում:

Գողանում, զրում եմ յերգեր՝  
ձեր ցավը յերգով թափեմ,  
բայց յերգս թույլ յեղեգ ե,  
ինչպես գուք ձմռովա դեմ:

Շուտ կանցնեն այս որերը  
ու պիտի չուշանա, զա  
ձեր նոր հանճար չոմերը,  
զրե մի «Խուժանական»:

Վոր տեղից պիտի զա նա  
հզոր ու արեափայլ.—  
այնտեղից, ուր գու հիմա  
շրջիկ ես, խուլիզան յեղբայր:

—Վարն ե, այն ծառը վարն ե,  
վոր լես ու դու տնկեցինք,—  
մեղանից ով կխորհի  
ալս միտքը խորթ, ընկեցիկ:

Ել ում, ել ումն ե ճանաչ  
իր տնկած ծառը ալսանդ,  
մի ծառաստան ե կանաչ,  
մենք բոլորս ծառաստեղծ:

4

Պապը իր միակ բարդին  
որորոց շինեց թոռան,—  
ուղեց վոր մահից անդին  
կանգուն չթողնե նրան:

Ասում եր՝ «բարդին իմն ե,  
ինձ հետ ել թող վերջանա.  
լեկողը թող իրն հիմնե  
ու իր հետ տանել ջանա...»:

Յեկան թռները արի  
որերի հետ ճարճատուն,  
ու լուսածագին դարի  
սկսվեց նոր ծառատունկ...

Ակդ ով ե, ով ե տնկել  
պուրակն ալս խիտ, ծառակուռ,  
լես ու դու և նա, ընկեր,  
մեր ջանքը միահամուռ:



ԲԵՐԱՄՆԱՎԱԾԱՐՈՒԽԱՐ

Ամենքից վեր, ամենքից վաս ծաղկած արե,  
այնքան ցնձուն  
արեի տակ լողանում են ծաղկուն ծառեր,  
լույսից ցնցուզ:

Ի՞նչ մերկություն, գիրդ ու փորթամ, ի՞նչ մերկություն  
արհալճոց,  
ի՞նչ ներգաշնակ համապարփակ սիրերզություն  
հալող—ձուլող:

Սահղծումի ինչպես մզում, վորպիսի թափ,  
սերմաթորում,  
ամեն քայլում՝ աներեսույթ՝ բայց լուսի տակ  
ըեղմափորում:

Ամենքից վեր, ամենքից վաս բացված արե՝  
լուսի ցնձուզ,  
արեի տակ լողանում են ծաղկուն ծառեր՝  
ծիլ ու ընձուզ:



## ՇՈՒՅԸ ՈՒԹՅՈՒՆ

Գարնւն, շուայլ ես, շուայլ ես այնքան,  
չունես վոչ մի կշիռ, վոչ մի հաշիվ.  
ինչքան սերեր ու խինդ արեգական՝  
այնքան մտորմունք ու այնքան հաշիշ:

Այս վառ ու պայծառ ծառերի վրա  
այնքան ծաղիկ սիս — սիստակ, սատափե,  
ու հանկարծ... կարող ե մի քամի սուրալ  
ու կյանքի ծառից թերթիկս թափել:

Ինչու յես զու ալղքան փարթամ, շուայլ  
ալղքան բեղմնավորում սեր անհազուրդ...  
ու գարնան յերկինքը կարմրաշառայլ  
կարող ե և կարկուտ թափել կարկուտ:

սիրտ իմ, բույրերը, բուրերը ծծե,  
թող զուր չանցնի այսքան ծաղկի արբունք...  
Այգեկութին, պտղին չհասնեմ զուցե,  
ծաղիկներով, ծաղիկներով արբենք:



## ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ

Քաղցր գաղտնիք՝ մահին զավոդ,  
անտառներում, սարում, ձորում  
այնքան զգուշ, խորհըրդավոր  
համապարփակ բնվնավորում:

Ամեն, ամեն զգայարան  
վայրկյանը ալդ չի փորսալու,  
սիր'ար, սիրալ... միայն նրան  
հանանելի սարսուն այս լուս:

Բողբոջումներ, ծլում, ծաղկում  
հղիություն համատարած,  
գալար սրտեր սիրով ծաղկուն,  
սիրով սրտեր իրար փարած...

Այնքան հղոր, այնքան ազդու  
ուժը գարնան...բայց իմ հոգում  
ալելի վեհ և իմաստուն  
պաղաքերումն ու ալզեկութ:



ԶՄԵՐՄՆԱՅԹՆ

I

Զմռան պարզեց գիշեր՝  
վոչ մշուշ, վոչ ամպ ու քող,  
լուսինը՝ սառցե մի շերտ՝  
սահում և լուս լերկնքով:

Աստղերը դողդողում են՝  
կարծես թե բուք բորանում,  
հազիվ հազ պապղում են,  
առկայժմում են, փոքրանում:

Լեռների լանջերից վար  
լուսինը կաթ և թափեր,  
կաթն այնպես ցոլում և սառ,  
փայլով դժգույն, սատափե:

Ծորել ե, լցվել ձորում,  
ձորը սառած, կաթնողող,  
ու այնպես և ցոլցըլում  
գետակի տեսքը վողորկ:

Քամին վսոնում և զարհուր,  
չի ճանաչում պատ ու թումբ,  
ուզում և փռել սարսուռ՝  
անդիմագիր պարտություն:

2

Ուշ զիշեր: Տուն եմ գառնում յիս:  
Փոքրիկ քաղաքի ծայրամասն ե:  
Քամին արդելում, քաղցքս խառնում ե,  
խոկ յիս շատապում եմ տուն հասնել:

Ճոռում և սառուցցը վոտքիս տակ  
ուզում և ինձ ինչվոր բան տաեւ,  
իմ շունչը սառցանում և հստակ  
շարվում ոձիքիս տաեղ—տաեղ:

Ինչքան շատապում՝ այնքան հոգնում,  
ինչքան հոգնում՝ այնքան հեռում եմ,  
քամին աճապարանքս հեղնում,  
ինձ հետապնդում, հետեռում ե:

Մերթ կանգ եմ առնում, շունչ եմ քաշում.  
կուրծքս ցավում ե, ողը սառն ե...  
մտքովս անցնում են տմառ, աշուն,  
թվում և գարունը մեր տանն ե:

Գարունը, գարունը մեր տանն ե,  
այդ և ինձ գոտեպնդել, զինել  
բայց այս զիշեր տեսնում եմ ծանր  
ձմեռալին այնքան տեսիլներ:

Զեկուցում կար դահլիճում,  
զեկուցում խոսքեր կրակ,  
ովայքար կտրուկ, անզիջում,  
զրոն թշնամու վրա:

Դահլիճում կար մի արձան՝  
այնքան վեհ ու պարզ այնքան,  
և սիրտ, և զլուխ բարձած  
քենով և ատելությամբ:

Դահլիճում հոգի հուզող  
այնքան խոր մտքեր հասուն,  
այնքան քեն զայրույթ ու վոխ,  
այնքան կամք, այնքան ցասում:

Այնքան աչքեր վառվոսւն  
ու վեր բարձրացած ձեռներ...  
ուզում են գնալ հեռու,  
նրանց հետ կովել, մեռնել

Ատելությամբ ու վոխով  
և, սիրտ, և, զլուխ բարձած,  
ավարտած ճառ ու ժողով  
զիշերը յես տուն դարձա:

Իմ շուրջը ձերմակ ե, ձյուն ե,  
ինչպիս համատաքած եկրան։  
Քամին խաղում, խաղցնում և  
սովերներ եկրանի վրա։

Աւ վազվառմ են մարդկային  
սովերներ ուղեղիս վրա,  
ուղեղն իմ դոսակարգալին  
խոն ու պատկերների եկրան։

Ամեն ինչ պարզ ե յերեսում,  
ինչպիս իմ աչքերի առաջ,  
վազում են, վախչում, ճեռում  
զլխիս մեջ, ձյուներում սառած։

Յելնում են հոկտ բանակներ  
իրար դեմ արշավ ու դրոհ...  
այն մեր, այս այն մեր բանակն ե  
հաղթական ու կարմքաղբոշ։

Յեկ ապա, կարծես թե արթուն,  
տեսնում եմ յես անջատ—անջատ  
գաղաղած վալելքը մարդու,  
զժոխային մահ ու տանջանք։

Քամին եւ սոճու անտառում  
շառաչում, խրախճան տոնում,  
թէ՞ հեռու, հեռու կանտոնում  
բանվորական թաղն են վառում:

Սառնուց և կախված այն սոճու,  
կամ հենց ալս կտուրի ծայրից,  
թէ՞ քամին անողոք, վայրի  
մի կախված դիակ և ճոճում:

Լաց և, հեծեծանք եւ վորրի,  
թէ՞ բարակ քամին և վզզում,—  
քամին չե, ալդ հաց և ուզում  
հանքափորի սոված վորդին:

Աչ, ելի հին ծանոթ մարդիկ,  
ընկերներ Դորիս և կաշեն,  
ձեզ ուր, ուր են ուզում քաշել  
բմնտ են տանում, ընկեր Մարտի:

Ա՛յ; գեմս այն տան հետին  
շարժվում են ուրուներ լերկու,  
տիսուր նախում ենք մեկ-մեկու  
լես, Սակկոն ու Վանցետտին:

Յելնում և զիմս, մարդ և,  
—հոսանք և հոծ, անգանակ,  
ու նորից լերկու բանակ  
դալիս են ճիշտ զիմ առ զիմ:

Տեսնում եմ հետեւերում  
ելի ձակատ ձակատի  
լերկու բանակ հակազիր  
զարկվում են չար, անհերում:

Ամեն տեղ նույն խմասն ե,  
միայն ձեն և զանազան,  
պալքարներ հազար-հազար,  
ու մեկը մյուսի մասն ե:

Այն մեր բանակն ե, տեսնք,  
ուր վոր ուզում և լինի,  
հետավոր լերկում Զինի  
ելի զործում և մեզ հետ:

Ամեն ուր զուզգ բանակներ  
իրար զիմ, վերջին զրահ...  
այն իմ, այն իմ բանակն ե  
հաղթական, կարմբազբոշ:

Շունչս ծանրացել ե արդեն,  
քամին հրում ե, վոռնում՝ «գնա».  
զգում եմ, շնչում եմ, մարդ եմ  
սակայն վոտքերս մեքենա:

Հասնում եմ դուանը փակած.  
բացվում ե: Ինձ թվում ե թե  
զարունն ե հրահուր ծաղկած,  
զարունն ե, վոր բացվեց իմ դեմ:

Վոր տեղից եր ալդ հուրհրան  
զարնան շունչը, վոր դեմքս զգաց...  
այ, հենց դեմի պատի վրա  
կոմինտերնի կոնդրեսն ե բաց:

Այստեղ հինգթևանի մի աստղ  
պայծառում ե տարվե տարի...  
Գարուն ե, դարուն ե ալստեղ,  
դուրսն ինչքան քամին զալարի:





ԱՐՅՈՒՆ ՅԵԼ ՔՐՏԻՆՔ



## ՅԵՐԳԻՆ ԱՌԱՋԻՆ

Դադաքալլ մոտենում և զալիքն աբդեն,  
ոռուցվում և որըստորե ձեռքերով մեր,  
չքան ճամբին սպառնալի խութեր բարդվեն  
աղմկեն ու շառաչեն ինչքան հողմեր:

Կտեմբերան մի առավոտ վառ խնդությամբ  
բժանումով և արյունով հիմքը գրինք.  
Ոռումբերը թմրուկ լեզան մեր խնդության  
մահացան հբացանները՝ ահեղ սրինդ:

Դաբերում գեռ վոչ մի լերգ, վոչ մի նվազ  
վողողել լերջանկությամբ կյանքը ցավոտ՝  
չքան յերգը ալդ աներկբորդ, աբյունլվա.  
Ծ վորոտաց հոկտեմբերյան մի առավոտ...

Ո մւր և այն հբացանը անտիք, անգին,  
ո փողոցում առաջինն եր՝ յերգը սուլից,  
վժրտեղ և վերքն առաջին այն գնդակի,  
ատեղծման այն առաջին քալլը ուր և:

Մեր կառուցման ուժը հիմա բնչ հզոր և,  
ամբողջ յերկիրն անպարտելի բազուկ քշտած,  
վոր գալիքը մոտեցնում ե որըստորե...  
դարձիր, անխվ, ու հոլովիլիր շտապ-շտապ:

Ո՞վ քանդումի և ստեղծման առաջին քայլ  
նոր դարերի յերջանկության կարմիր երա,  
թող առաջին յերգդ ահեղ ու արնափալ  
հուրհատե վողջ աշխարհի յերկնի վրա:



## ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ

Վարտեղ են առավոտները կաբմիր,  
արշալումները արնափալվ  
մեր իզեաները վառ, հբամարմին,  
պալքարի, արյունի յեղբանիր,  
վարտեղ են առավոտները կաբմիր:

Արգեն կեսոր և, վառվուն կեսոր,  
արյունը դարձել է քրտինք,  
քանդումը ստեղծագործում և հզոր,  
կառուցումն ավելի խթին,  
արգեն կեսոր և, վառվուն կեսոր,

Զգում ես ուսերիդ վրա, ընկեր,  
զենքի փոխազնն այն քանդիչ  
ծանր կառուցման լծակն և ընկեր  
նոր կռվի հոգակը անթիվ  
զգում ես ուսերիդ վրա, ընկեր:

Գաղափարն արգեն մարմին և գառնում  
շաղախված արնով և ուժով,  
զժվար և, բայց մնաք համառ, անդադրուց  
առաջ ենք մղում աշխաժով.  
զաղափարն արգեն մարմին և գառնում:



ԼՈՅ.ԽՍ Ե ՊԱՌԱՎԱՎ ՄՒ

Լալիս ե պառավ մի, ճչում թքում ե,  
այնտեղ քանդում են խարխուլ մի տուն,  
մի շինարար ձեռք արթուկում ե  
փողոցները ծուռ, տները անդուր:

Վոչինչ չի դիմանում, փովում, ծալվում ե  
ծանր ընթացքի գեմ այդ նոր տանկայի,  
նորը գալիս ե ու ծավալվում ե  
ու ծարում, հարթում ե ինչ վոր կա հին:

Յերկրային կամքն ե արդ համառ ուժը  
վոր այդպես հզոր արյունից հարլավ  
ամեն ինչ գծված ու կանխորոշ ե,  
վոչինչ նրա գեմ չես անի, պառավ:

Արդեն քանդված ե խարխուլ տան ծածկը,  
հիմա քանդում են հիմքերը պատի,  
գեռ չես հասկացել այդ ինչ ընթացք ե  
ու յերբեք ել չես հասկանա տատի...

ալիս ե պառավը, անդոր թքում ե.  
գեմը քանդում են ինչ կա հին, խարխուլ,  
մի շինարար ձեռք արթուկում ե  
տները անկարդ, փողոցները ծուռ.



## Մ Ա Խ Տ Ք

### 1

Վորքան, վորքան սաւլառնակներ...  
Մենք նոր ենք շինում խճուղին.  
Երկիր իմ, չարքաշ բեռնակիր՝  
լոկ ծանոթ սալին, ծուխին:

Թոիչքներ Մոսկովից Լոնդոն...  
Նոր ենք շինում յերկաթուղին,  
յերկիր իմ, մեքննան, ոթոն  
դեռ նոր են հասնում զբուղին:

Ողում բանակներ սազմի...  
Մենք նոր ենք հողի վրա.  
Երկիր իմ, աշխատանք ազնիվ,  
նոր ուժով վառված կրակ:

Մենք դեռ շատ, դեռ շատ ենք հին՝  
քան սեպագիր հաւշարձան,  
ըայց աստղը խորհըրդալին  
այնքան նոր, այնքան պայծառ:

Յեկ վորպես, յերկիր իմ, վորպես  
ապեն ալս յերկուսը խառն,  
այս հինը, հինը բոբըս,  
ալս նորը, նորը պայծառ:

Ալանում եր նոր խճուղով  
ոթո-կառքը շոգի ու շին.  
յհտելքողում եր ծուխով,  
յհտելց վաղում եր փոշին.

Այս անծանոթ լեռնաստանում  
ոտարական հյուր եր զեռ նա,  
մենակ, մենակ եր սլանում  
նոր գարնան յերկաթ-ծիծեռնակ:

Ու կարծես նա սարսում եր  
ձորերից այդ անտառախիտ,  
հանկարծ բոսալով վաղում եր՝  
«զու, փախիր, զե՛ փախիր, փախիր...»

Սուրում եր նա ահեղաթափ,  
ձեղքում անտառը ծառախիտ,  
ձորերում ձգելով խուճապ,  
խրտնեցնում մարդ, հոտ ու նախիր:

Արել հորիղոնին եր մոտ.  
 ողնության աճապարանքով  
 գնում եր զեղի մայրամուտ  
 յերկու սեղ լիռան արանքով:

Յեզ հոգնած խնդությամբ նա մի  
 նայում եր կառքի ժիր վաղքին,  
 թափում եր իր գեղնակարմիր  
 գզվանքի անաբատ վոսկին:

Թվում եր, թե պապիկ մի ծեր  
 ժապում և թոռան զեռահաս  
 և վոսկե խնդությամբ ոծել  
 կուզեր գլուխը վոսկեվարս:

Զահելի հպարտությամբ նա  
 կծկելով փոված խճուղին,  
 ալդ կայտառ, մանուկ մնքենան  
 մոտենում եր ծերուկ զբուղին:

Այս զբուղը մնանակ, մի հատիկ  
սեղմկած լիոների որանքում  
չեր տեսել հերք լիրկաթի,  
չեր տեսել շոգու առաքում:

Միայն քաղաքից զարձող մի,  
կամ զինվոր մի արձակված  
պատմել եր քաղաքի կողմից  
հաղար հրաշք ու առեղծված:

Իսկ հիմա՝ յերք այս ոթոն  
զոռալով զլուդն եր մանում,  
մամիկն իսկ՝ ապրող քթախոսով,  
յերինջի նման եր խըրանում...

Բնիկել եր աղմուկ, աղաղակ,  
խնդություն, հույզ յերկլուդի...  
մեքենա, լիրկաթ—աքաղաղ,  
կանչիր լուսածաղը զլուղի:

Մինչ ֆալքի պառավը ցնդած  
աղոթում եր ժամի բակում՝  
«յեկել և վերջին զատաստան,  
Նեռն և լուս ընկել աշխարհում»—

գրքից քաղած դիտությամբ,  
ինդությամբ և ահով լիցուն  
մանուկները կիտվում են թափ,  
ոթոյի զիրկն են լիցվում:

Ու մինչե կես զիշերը անց  
չեր հասել ծալը զրուցի...  
«հրաշք և հրեղեն, անկարծ,  
ճշմարիտ և ֆալքին դուցե...»

Վորպես խռպոտ մի աքաղաղ,  
նա կանչեց հաղթանակը փորձի  
ու վերադարձավ քաղաք  
ըերելու նոր հրաշք ու ձեւ.



## ՅԵՐԳԻ ՀՈՂԻ ՄՈԱՄԲԻՆ

Իմ հողի համար ի՞նչ առավոտ ե,  
և յերգիս համար ի՞նչ որ լուսացավ...  
Բայց քեզ հիշում եմ... Դեռ ի՞նչքան մոտ ես,  
իմ սե մանկություն, հողի վիշտ ու ցավ...

Հուլիսն եր իջել մեր գյուղի վրա,  
շեկ ասեղներով արեն եր կիզում.  
Հետում ելին թույլ ծառերը լուած,  
տերեները կախ, վորտես շան լեզու:

Արտերում սուդ եր: Արդվոր կույսերի  
վարսերի նման, թեվերը թափած  
յերազում ելին հասկերը թերի  
ջրերի սերը, համբույրները թաց:

Զրտուքի որը տոնական որ եր,  
յերը, ինչպես շվին իմ, վտիտ տոռւն  
ջրերով—յերգով պիտի որորեր  
հասկերի սերը, ուռճացումն առույգ...

Բայց այն առավոտ, յերբ մեր արտն ի վար  
իշավ յեղբայրս՝ ջրտու բան ուսին,  
ոզի իրիկուն դարձավ մեղ համար,  
արել դարձավ մի սառած լուսին...

Ախ, ինչու այն որ ջուրն այնպես քիչ եր...  
Հենց արտի կողքին այդ ջրի վեճով  
դրկիցի բահը թրի պես իշել,  
ճեղքել եր յեղբորս ճակատն անդիջող...

Ծարաված արտը ծծում եր, քամում  
նրա արյունը և կյանքը նվազ...  
Հարեան արտում ջըրտուք եր անում  
մարդասպան մարդը լուռ ու գլխակախ...

Անիծում եմ քեզ,(ի՞նչ ոգուտ սգալ),  
իմ սե մանկություն... աճած և հասուն,  
ինչպես իմ յերկրի այսորը զգաստ,  
յես հիմա ուրիշ կյանք եմ յերազում...

Յեվ ի՞նչ յերազել... Փլվում են հիմա  
և սահմանի քար, և վտիտ առու,  
և, մեր արնախում արտերի վրա  
բացվում ե կանաչ, համասփյուռ գարուն:



## ԼՈՒՍԱՑՈՒՆ

Լուսե տոն և, լուսե տոն, — խորհրդային խնդություն,  
կերտում ենք մեծ լուսատուն, — խորհրդային խնդություն:  
Գալիս և մի հուր-հրաշք՝ կերտված կամքով ու բազկով՝  
մեղ բորբոսից ազատող, — խորհրդային խնդություն:  
Բարձրանում և երերում անլուծելի մի սահման՝  
հինն ու նորը խոր զատող, — խորհրդային խնդություն:  
Խլրտում և ամեն գյուղ, ամեն հլուզակ, ամեն սիրտ,  
վողջ յերկիրը լուսաթով, — խորհրդային խնդություն:  
Վաղը վերջին խրճիթում ճպոռտ լամպը պիտ ջարդե,  
վառե նոր լույս հարս Սաթոն, — խորհրդային  
խնդություն:

Աւ վարակող ժպիտով, յերգի նման որտազեղ  
լույսը կանցնի անից տուն, — խորհրդային խնդություն:  
Գործարանում նորաշեն անիմեերը ծանրագարձ  
կաշխուժանան մշտարթուն, — խնրհրդային խոդություն:  
Կարագանա կյանքի չուն, կարագանա կյաքի չուն,  
նոր թափ կառնե դպրուն, — խորհրդային խնդություն:  
Դեպի, դեպի կոմունան վագքի ւելած մեր յերկիր,  
սլանում ես ահա դու, — խորհրդային խնդություն:  
Ակսոր տոն և, լուսատոն, մեր յերկիրը լուսաթով  
կերտում է մեծ լուսատուն, — խորհրդային խնդություն:



Ակսքան բազմազրադ զլուխ,  
մկան՝ պնդապիրկ, համառ,  
ուսեր՝ բեռի տակ հլու,  
բեռներ՝ կառուցման համար:

Ակսքան մշտաթոր քրափնք,  
այսքան ստեղծման ուղի,  
մտքեր՝ ներդաշնակ սրտին,  
սրտեր՝ գալիքով հղի:

Տարեք, լեղբակըներս հուկսի,  
բեռներ կառուցման համար,  
ձեզ հետ գալիս եմ ուսիս  
տաշված մի կտոր մարմար:

Արչուն թե թքեմ կրկին,  
ճամբին ուշանամ տկար,—  
բեռս թող գառնա շենքի  
գուան սանդուխքին մի քար:

Հոգ չե թե ընկնեմ անհաս  
գալիքին, ճամբին կորչեմ,  
միայն չմնամ անմաս  
կառուցման ծանը գործին:



ԼԻ ԲԻ ԿԱՌ.

Զարկ, սիրտ իմ, ալդպես հասու զարկ,  
մի Հովանեմբեր հազար զարուն,  
թող մի զարկումդ լինի հազար  
հազար զվարթ զանդահարում:

Խնչժւ թռւլ թպրտալ, խնչժւ  
բազծալ անթիվ անկյանք զարուն,  
Մ, խեղճ, խեղճ թեահատ թռչուն  
վոչ մի հզոր թափահարում:

Այն, այն վոր ուզում ենք մենք՝  
դարեր անցավ հենց մի զարկով,  
խել թե սպասեցինք մեկ մեկ  
մեկ-մեկ մահն եր հենց մեզ զարկող:

Զարկ, սիրտ իմ խոր ու գերզգա,  
պետք չե հազար անկյանք զարուն,  
թող մեկ զարկովդ հազարն զղամ,  
հույզի հազար զանդահարում:



## ՅԵՐԳԵՐ ԱՌԱՎՈՏՅԱՆ

### 1. ԱԺԱՐԲԵՐԸ

Կանչում են ամեն առավոտ,  
աքլորները կանչում են զիւ.  
յերգ չե ալդ զբութիչ, փառավոր,  
վոչ ել ճիչ աղեխարշ, կիզիչ:

Բայց թնդում է նրանց կանչից  
իմ սիրտը մի առողջ զարկով...  
Ինչ բնադր վեհիմաստ ու ջինջ՝  
առավոտիան սպասարկող:

Ել ի՞նչ յերգ ալդքան փառավոր  
մի խմաստ կունենա հուզիչ...  
կանչում են ամեն առավոտ  
աքլորները հպարտ ու զիւ

## 2. Արեսի քեվերը

Յելնում ես վառ ու կայտառ,  
զարթոնքի լրարեր զու,  
աքլոր իմ կարմրակատար,  
արե իմ վոսկեփետուր:

Թեերդ ես թափահարուժ  
կտուցդ պարզած վստահ՝  
թողնում ես առուշառու  
լույսերիդ յերգը հստակ:

Ու յերգերդ խուրձե խուրձ,  
վորպես լուսեթել կծիկ  
մեր կյանքը նորակառուց  
կապում են յերգող կոցիդ:

### 3. Առաջնորդ

Յերկրում իմ առավոտ ե,  
զարթնել են գյուղ ու քաղաք...  
Դեռ սրտիս այնքան մոտ ե  
յերգը քո, ով, աքաղաղ:

Թեև յերակե-յերակ  
զգում եմ աշխուգժ մի այլ  
շրջում ե յերկրիս վրա  
հաստատ ու յերկաթափայլ.

Բովում ե նրա կարոտը,  
զարթնում եմ նրա կանչով,—  
բայց քո կանչն առավոտի  
դեռ գնդում ե իմ ականջում:

4. Թալուս

Ուշիս, շշակներ, վորքման թովիչ  
սուլում են զիւ ու շոգեղունչ,—  
աքաղաղներ յերկաթավիդ  
առավոտյան վոսկեփոշում:

Հաղթանակի յերդ վոսկեթե,  
ստեղծումի համառ ձգտում,  
վոր կոկորդներն ալդ յերկաթե  
այնքան հստակ են ավետում:

Նըանց կանչից յելնում ե վեր  
ամբողջ կյանքը յերկաթ հազած,  
ե գալիս ե հստատ ու վեհ  
մեր ապաղան:



## ՅԵՐԳ ԽՆԴՈՒԹՅԱՆ

Ճակատիս նա իր կնիքը զարկել ե  
և սրառումս նոր հուզպեր և վառում...  
Հիմա հատու յեն սրատիս զարկերը  
և խնդությունս առուասու:

Յերգերս աբդեն անխառն ու պարզ են,  
ինչպես ցնձուղը արեգակի,  
յերգս հոսում ե, վորպես ավաղը՝  
սիրտս և յերեսում յերգերիս տակից:

Այս խնդությունը, այս պայծառ սերը  
և այս կարկաչը հոգեթով  
իերենց թերերը ազատ պարզել են,  
փոխվել ե, կարծես, կըանքը հեքյաթով:

Այս խնդությունը, խնդության յերգը  
մենակ իմը չե ձեղանից թաքուն,  
դա հենց ձեր խինդն ե, ամենքիս յերգն ե  
և մեր որերի կամքն ե նվազում:

Ամեն մի տողը, ամեն բառն եւ  
հենց ամենքից եւ և ամենքիս.  
ինչքան հասու յի դառնում պաէքարը,  
այնքան հստակ եւ կարկաչը լերգիս:

Յերգերիս նա իր թափը տվել եւ,  
նոր զրգիռներ եւ խմ սրառում վառում.  
հզորանում են վոգուս թհերը,  
խինդս հոսում եւ առուշտուս:



Ա Ճ Ո Ւ Մ

Ամեն ինչ լենում, հառնում է,  
հղի յե նորով հոդն ել,  
ամենափոքը առուն ել  
այս նոր ջրերն են վողողել:

Վոչ մի կորթ հոգ չի արգելի  
ալդ համառ ծլումը, ալդ աճումը,—  
լերեկ ալսահղ կորթ եր, այսոր լեմբը  
և տես, վոր քարն ել կանաչում եւ:

Աճում ու թվում ե թե  
անհայտ մի ուժ ե, վոր վարում ե  
ալդ համառ ընթացքը լերկաթե,  
ալդ զգաստ վարարումը:

Ու լերը անցնում ե լերակե լերակ  
լեռանդիդ հոսանքը լեռացող,  
զգում ես, զգում, վոր կանքի վրա  
հենց քո ալդ ուժն ե թևածում:

Համառ փոխում ես զու շուրջ  
ու շուրջը քեզ և փոխում,  
և լելնում և այդ նոր ամբողջը  
կլանքի հանդերը վսղողում:

Ամեն ինչ լելնում, հառնում ե,  
բարձրանում և վեր հոգն եւ  
ամենափոքր առուն ել  
այս նոր ջրերն են վողողել:



ԿԱՐՄԻՐ ԼԱԶԱԿՆԵՐ



## Ա Ե Բ Ո

Գարուն ե, զրդիռ ե, տաք ե,  
կապույտ ե, բաց յերկինքը.  
արել թափում ե իր կրակը,  
ամեն ինչ յեռանդ ե, կիրք ե:

Ինչպես փոքրիկ Հայաստանը,  
մենք եւ սիրելիս, ջահել ենք,  
զուր ե սիրուց վաղ գալը,  
ամոթ ե դաղանիք պահելու:

Զուր ես կարծում աղջիկ ես,—  
վոր սիրես՝ կկոտրես կամքս,—  
ինչքան քեզ սիրեմ, աղջիկս,  
այնքան կսիրեմ կյանքը:

Միթե, միթե Հայաստանը  
յերբ իր փոքրիկ զործն անում ե  
մոռանում ե մեծ իդյալը,  
այն մեծ, մեծ ընդհանուրը:

Ու թեկուզ հեռու զյուղում մի,  
ուր զեռևս յեզ են նալում,  
յերբ շոգեգութանը սողում ե,  
չեն յերգում ինտերնացիոնալը:

Շոգեպութանով շուռ կտան ասը,  
կկառուցեն փոքրիկ նոր տունն ել,  
դրանով ընդհանուրի համար և,  
վոր զգաստ և արթուն են:

Զուր ևս կարծում աղջիկ ես,  
վոր սիրես՝ կմեղկանա կյանքս,—  
ինչքան քեզ սիրեմ, աղջիկս,  
այնքան կամբանա կամքս:

Սիրո ամենավառ պահին ել,  
վորին այնքան յերգեր ձոնել եմ,—  
սրառումս արթուն և մեծ հիմնը,  
արթուն և Խոտերնացիոնալը:

Հիմա, ինչպես Հայաստանը,  
մենք ել աղջիկս, ջանել ենք,  
զուր ևս սիրուց վազ զալը,  
սերը զազանի պահելը:

## ԳԱՐԵԱՆԱՑԻՒՆ

Արաբուն յեզ Արամայիսին

### 1

Յերբ ձընհալն ընկնի, ձյունը հալչի,  
այնքան թովչութիւնն, այնքան հմայք  
կարող ե ունենալ մի աղջիկ,—  
կայծկլտուն աչքեր, վարսեր քումայթ...

ի՞նչ հուր կարող ե սիրտն իմ դաղել,  
սիրտս հանձնված կարմիր գրոշակին...  
ի՞նձ թովում ե կրծքիդ մետաղե  
փոքրիկ դրոշը, դրոշ՝ «ԿԱՄ»:

Գարունը այնքան ծաղիկ, այնքան...  
Ով ինչ ինսություն ուղի՝ քաղե,  
քո՞ կրծքի վրա կարմիր ծաղկած  
կրմաս դրոշը մետաղե:

Վոչ մի ծաղիկ այնքան հրապուցք  
չի փռելու իմ սրտի վրա,  
ի՞նչքան քո ծաղիկը հրաբուք,  
մետաղե դրոշ հուրհըրան:

Գարնան արել կայծկլտուն՝  
գարնան բուզբիրը կիզիչ...  
Մի բան զարթնել և իմ սրտում,  
մի բան հուզում և ինձ:

Արելց մի կտոր կրակ  
հուրհուրատում և իմ սրտում,  
հոսում են յերակե յերակ  
նրա լույսերը բոցկլտուն:

Կայծակվում են իմ բիրերում  
զարնանալին այնքան հույզեր,  
ու, վորպես շեկ կայծակն և այրում,  
ուզում եմ քեզ հրով կիզեր:

Բայց հպարտ կրծքիդ վրա  
դու կարմիր դրոշն ես զարկել,  
իմ հուզկերի դեմ հուրհրան  
կարմիր դրոշգ շանթարգել:

Դարունը այնքան խթին գործ  
պիտի մեր ուսին բարդե,  
վոր ճակատիս քրտինքով  
վոռողվեն ալտերի վարդեր:

Կառուցման անհագ մի տեսչ  
պիտի մղե յերկուսիս,  
վոր այդ մեծ ստեղծման մեջ  
մի քար իջնի մեր ուսից:

Հենց կառուցման պահին ալդ  
պիտ լցնեն այնքան խնդություն  
վիժանուտ վարսերդ քումայթ  
դարնանալին իմ սրտում:

Պիտ լեցվի սիրտս, վարար  
վարսերիդ նման, հույզերով,  
յերկուսով պիտ զգանք ծարավ  
կոմունիստական սիրտ:

Ն Ա. Մ Ա. Կ

Սիրելի ընկեր ու սիրելի կին,  
սպասում ես դու անհանգիստ, մոայլ..  
ի՞նչ պատասխանեմ յես քո նամակին,  
վոր համառում և սեղանիս վրա:

Նրա տողերը կարծես Ամուրի  
պրկած աղեղի սլաքներն են սուր...  
թվում և վոչ թե կարգում եմ լոին,  
այլ քո կարկաչող խոսքերն եմ լսում:

Յեվ քո շնչի տակ փթթում են, ծաղկում  
հույզերիս վարդերը անթիվ, անթիվ...  
զուրսը ցուրտ ե, ձյուն... Ի՞նչ վարդեր... Ա՛յս քու  
այդ մեղկ նամակը ոռմանտիկ:

Գուցե նրանից, նրանից և այդ,  
վոր դու ապրում ես ինձանից հեռու,  
այնտեղ, ուր ծովն և ցոլում լուսարձաթ  
և մշտականաշ ափերը քերում:

Յեվ չը գրկելով քո մարմինը պիրկ  
չհամբուրելով շըրթերդ հասուն,—  
յերբեմն յես ել այսպիս ոռմանտիկ  
անմարմին, հեռու սեր եմ յերազում:

Գիտեմ, կարուղ և հուրն այդ ներարկում  
և հուզում սիրառ մի քաղցր դոզով...  
կանցնի նա, հենց վոր հագնեմ վերարկուս  
և յելնեմ փողոց:

Կըմսա միայն խոր և խմաստուն  
սերը հույզերիս հատակում քնած,  
յերը հեռուներից վերգառնաս դու,  
նոր կըացվի նա:

\* \* \*

«Ամեն սիրո մեջ,—զբում ես դու ինձ,—  
միքիչ ոռմանտիզմ, քընքշություն կա,  
սերը սիրում և կարոռ ու թախիծ,  
մշուշոտ ափերն հեռու, հեռակա...»

Ո, վաչ, քո սրտի ոռմանտիզմն ե այդ,  
վոր ցոլանում և սիրուդ մեջ անզոհ,  
յեթե չլիներ այդ սերը վհատ,  
նա պիտի պոռթկար ուրիշ ակունքով:

Սերը մեր յեղավ այն լճակը ջինջ՝  
ափե ափ ծփուն, յերազուն—գերող,  
վորի թուշական ջրերի միջին  
ինքդ քեզ տեսար տիսուր աչքերով:

Ու քեզ թվում ե՞ ով վոր ել նայի՝  
նույն տիսուր գեմքն ե այնտեղ յերերուն,  
նույնիսկ հրեղեն արեն յերկնային  
տիսուր կերեա նրա ջրերում:

Զուզագիպումն այս, կարծես, հեղնում և  
մեր քնքշությունը սերը հիմնովին.  
Նամակդ թողած, հիմա գնում եմ...  
Ժողովին

Աւ յես, պոետս, վոր իմ սիրո մեջ  
լերբեմն ակամա, անգետ թեքվում եմ,  
գնում եմ հիմա մղելու բանալիճ  
թեքումների գեմ...

Պոյետն յերբեմնի, լերը վոր հոգնում եր,  
կյանքից թեքվում եր զեղ լեթերն անհուն,  
թեե զեալ յեթերն ինչքան թեքվում եր,  
վոտքն ելի հողին, կյանքին եր հենում:

Իսկ հիմա ինչպես թեքում ել լինի,  
նույն իմաստն ունի,—վոլոր, մանհման  
տանում ե կյանքդ ու կապում հնին,  
թողած ուղիներն նոր կյանքի կերտման...

Աւ մեր այս սերը այսպես սոմանտիկ  
մւը և տանելու մեզ կամաց-կամաց...  
տարբեր հանգերով լերզում են մարդիկ  
միենույն լերզը հաճախ, ակամա:

Ահա, ծիծաղի նման հստակ և  
ու ժպտում ե գեմքիս այս լիճը...  
Սակայն պլաստիկ... Տիղմ եր հատակը...  
Այնտեղ նետածո մի փոքրիկ խիճ եր:

Հասպա մի սիրտդ շարժիր կամացուկ.  
ինչքան հնություն կա մեր հույզերում,  
մեր արյունի մեջ, մեղանից ծածուկ...  
և հին ենք, և նոր, կամուրջի սերունդ:

Մեր սերը կարծես մի փոքրիկ խիճ եր,  
վոր ներաշխարհը մեր ալսպես հուզեց...  
թողնենք բառերի աղմուկն ու ճիչը  
և մեր արյունի գետերը սուզվինք:

Այս սահնակմենատալ սիրով հազիվ թե  
նոր խմաստ առնե մեր կլանքը, հազիվ...  
զտենք մեր սիրտը, մեր սերը զտենք  
վոր որերի հետ ներդաշնակ հոսի:



ՀԵԳՅԱԹԻ

Ինչպես խուսափուկ մուժում  
մի աշնան՝ հին յերազի,  
մայրիկիս հեքաթն ևմ հիշում  
մարդու թոփչքի՝ մասին:

Պատմում եր թե ինչպես նո՞  
կախարզը այն հեքաթի  
թռչում եր անմեքենա՞  
հեծած մի աթոռ փալտե:

Այն հոկան մարմնեղ, արի,  
վորոկս վոզի մի թեթե  
թռչում եր լոթը սարի  
ու յոթը՝ ծովի լեռեւ:

Այնտեղից ըերում եր նա  
աղջիկներ հուբ-հրեղեն,  
վոր, իբր, հողի վրա  
յերբեք, յերբեք չեն լեղել:

Բերում եր արե ու լուս  
և ջրեր անմահական,  
վոր հողի մարդը հլու  
չտրվեր մահին ագահ...

Ու յես՝ մանուկ մտորուն  
լսում եյի շնչաղուսպ,  
փակած աչքերս ցնորուն  
թռչել եյի յերաղում...

Խեղճ իմ մայր, այն եր հեքլաթ,  
վոր մեռար այդպիս անգետ,  
ու հիմա ցնորուն տղադ  
շարում ե այսպիս հանգեր:

Ի՞նչ հեքլաթ, ի՞նչ յերազ, ցնորք,  
ի՞նչ հսկա հեքլաթում քո սուտ,  
այսոր այստեղից Նկու-Յորք  
թռչում ե ամեն մի քոսոտ...

Յերբ թռչում ե մի ինքնաթիռ,  
ցավով եմ հիշում քո մասին,  
մահը քո, քո հեքլաթի,  
կատարումն իմ յերազի:



## ԳՐՈԶԱ 1.0.ԶԱԿԻ

Լուսի ենթիվանին

Տեսիլներ կան չար, չարաչք,  
հուշեր սե, անասելի.  
չես ուզում, բայց, — ի՞նչ արած, —  
հիշում ես, մարդ ես ելի:

Մեր տուն յեկավ են Հարոն,  
վոր իմ քրոջը հավինի,  
քույրս տասերկու տարու,  
քույրս անմեղ աղամին:

Հավանեց: Արին հարսանիք:  
Քրոջս Հարոն տարավի,  
ի՞նչքան լաց յեղավ Զանին,  
«Ճակտի գիրն եր անիրավ»:

Թորկու անգամ յետ յեկավ,  
հավանեց սրտի մորմոքը,  
հատակին ընկավը հեկեկաց,  
բայց հալրս անողոք եր...

Ամեն ինչ ել կարճ յեղակ՝  
յետ դնաց ճարը կարած,  
իմ քույրս, խեղճ յերեխս,  
այլև չտեսա նրան:

Յես տեսա միայն նրա  
լաշակը, վոր արնոտ եր.  
մալըս լաշակի վրա  
լալիս եր իր կարստը...

Ու ամեն մարտի ութին,  
յերբ կարմիր տոնն ե կանանց,  
սիրտս ուզում ե պալթի,  
հոգիս բացվի մերկանա:

Ա՛լի, զիտեմ՝ քույրս չկա,  
բայց կնոջ դրոշը վոր կա՝  
թվում ե քրոջս լաշակն ե՝  
նրա արյունով ներկած:



ԿՈՐՄՐԱԼՈՉԱԿՆԵՐ

1

Խնդուն որին ել հուրհրան  
յերբեմն մարդ թախծում ե,  
ինչպես յերկինքը ամռան  
քմահաճ ամպե, ձյունեւ:

Որերում այս ծաղկող ու շեն  
յես՝ կերտող, կարմիր կոմյերիտ  
հաճախ վորսում եմ հուշեր  
լճից անցած որերի:

Սիրտս արեին դիպած՝  
տեսնում ե՞մոմեր շիջող,  
ու ալնպես տիտուր մի բան  
սողում ե սրտիս միջով:

Բայց միշտ, բայց միշտ մի բան  
վերցնում եմ այդ հին ծովից,  
վոր սիրտս ծգտի վաղվան  
ու անցլալը նզովի:

Ահա, ահա տեսնում եմ յիս  
մալրիկիս դեմքը պառավ,  
պատուհանի ապակու պես  
ձմեռվա բուքից սառած:

Որերը զրկանք մռալլ  
կընճիս են կիտել դեմքին,  
ինչպես պաղ ապակու վրա  
սառչում են շունչն ու շոգին:

Ահա, ահա տեսնում եմ յիս  
քրոջս՝ գարուն փըթթած,  
տարաժամ փոթորկի պես  
իբ «մարդը»՝ անսիրտ, ոտար:

Տեսնում եմ թե ինչպես նա,  
քուզրս՝ մի ծաղկի ձեի  
ընկնում ե թոռոմած, թոշնած  
այն անսեր մարդու ձեռից:

Ու մի շող, կարծես ինչվոր  
սառած արևից պոկված,  
այդ սառ ապակու միջով  
կանցնի սիրտս բորբոքված:

Ու ճիչս պահած ցավով  
յերբ շուռ եմ գալիս մոալ,  
տեսնում եմ մի շեկ առավոտ  
փոված աշխարհի վրա:

Այնպես անզուսպ, անհազուրդ  
ե տարերային մի տենչ  
զարթնում ե, յեռում, աղմկում  
բորբոքված իմ սրտի մեջ:

Յես՝ գալիք արևով լի,  
յետես՝ խորշակ, քամի...  
ու հնին անդառնալի  
դառնում եմ չար թշնամի:

Ո' այն, ո՛, այն ինչ վոր կար  
թող մնա այնպես խաչած,  
գովերգում եմ ձեր ներկան,  
քույրեր իմ կարմրալաչակ:

Մայրիկս տանջված պառավ  
ու քույրս կարոտ գարնան  
թող այն ապակուց սառած  
հալվեն ու անհետանան:

Ձեր մեջ, ձեր մեջ ինչ վոր կա  
քրոջական, մայրական,  
նույնն ե, նույնն ե բորբոքված  
ինչ վոր մորս մոտը կար:

Վոր թպրտաց անողուտ,  
բայց հնում մնաց խաչված...  
ձեր ներկան եմ քնարերգում,  
քույրեր իմ կարմրալաչակ:



ՓՈՎՐԻԿ ՊՈԵՄԱ ՄԵ ՓՈՎՐԻԿ ԿՇՈԶ ՄԱՍԻՆ

1

Քեզ յերգեմ յես, թե ամենքին,  
սիրտս լայն ե, անսանձ, աղաճ.  
քեզ յերգեմ յես, փոքրիկ տիկին,  
քույր խմ, սեր խմ անսանձնական:

Ի՞նչ ունեմ յես՝ ամենքիդ ե,  
ունեմ-չունեմ վողջն ամենքին,  
սերս հստակ ամռան զետ ե,  
ջուր վերցընի թող ամեն կին:

Թեև այսոր յես քեզ տեսա  
այնպես տիտոր, ստարոտի.  
ըայց խմ սիրտը դարձավ հստան  
բոլոր կանանց փակ կարոտին...

Բայց ի՞նչ պիտի յերգս տա ձեզ,  
կամ խմ սերը անսանձ, աղաճ...  
Զեզ խինդէկտա առատաձեռ  
այս նոր կլանքը կարմիր ծաղած:

Մի փոքրիկ տիկին եք, մտավ Բանկոստ...  
Դլախո մեջ շողաց մի հին լուսընկա.  
Արտումո վաղճւց մոռացված հանգով  
անցած որերի մի հին յերպ զընդաց:

Յես սպասեցի ու գուրս յելավ նա,  
փոքրիկ զամբլուզը լցըած մթերքով՝  
այն փոքրիկ, փոքրիկ տիկինը դեղնած  
աշնան թախծալի մշուշի ներըու:

—Բարե՛ ձեզ, ընկեր...կամ...տիկին այսինչ...  
—Բարե՛, բայց ով եք...ո, ընկեր նորե՞նց...  
—Ե, վորտեղ ելիք, ի՞նչպես եք, —ասի.  
Նա տիսուր-տիսուր դեմքը վոլորեց:

Միասին անցանք մենք փողոցն իվեր՝  
նրա թեկից կախ հոգսերը իր տան,  
իսկ իմ սբուից կախ մի կնոջ պատկեր,  
անցած որերի հուշերի շղթան:

«Ասելը արժեք չունի,  
ինչ պատմել բարակ-յերկար...  
նախ գյուղում ուսուցչուհի,  
ճետո յել քաղաք լեկա:

Աղջիկ եյի կոմիերիտ,  
անդադար, անքուն-տոկուն,  
բայց... վորպիս թոշուն գերի,  
փակվեցի տան վանդակում...

Ամուսին՝ որտի հսկիչ  
յերեխա՝ վոտի կապանք,  
որերս՝ հոգս ու կսկիծ  
կյանքս՝ կարոտ, տառապանք:

Դառնալով տան մեքենա,  
ըջիջից դուրս մնացի...»  
ու սրբեց աչքերը նա,  
աչքերն անուշ, կանացի:

Այնքան դեղնած եր ալդ փոքրիկ կինը,  
աչքերի շուրջը կապուտակ բակ եր,  
աչքերում տեսա այն անզոր քինը,  
վոր գալարվում եր իր կրծքի տակը:

Արը ծծել եր նրա շըրթերը,  
յերեխան քամել յերկու ստինքը...  
մեկը հագեցել միուսը փթթել եր,  
իսկ ի՞նքը, իսկ ի՞նքը, ի՞ն ի՞ն Ք Յ:

Զեր կարողացել տոկալ այդ կինը,  
դուցե անխոռվ հենց հաղթըվել եր.  
յերիտասարդե, բայց ի՞նչ ե դինը,  
արդեն կտրած են նրա թևերը:

Զեր կարողացել... չին տունը սարդ ե,  
սարդը նրա շուրջ վոստախ հինել եր.  
շատ սովորական եակ մարդը  
ու պարտադիր չե հերոս լինելը:

Ել ուրիշ վոչինչ, վոչինչ չպատմեց  
 հին ընկերուհիս, այդ փոքրիկ կինը,  
 բայց ինչ վորածասակ, նրանով մատնեց  
 հին ընտանիքի ամբողջ ներքինը:

Յերբ հասել ելինք ակումբի գոան,  
 — Ներեցեք, ասաց, լես շտապում եմ...  
 Աւ լես սեղմեցի թույլ ձեռը նրա,  
 վոր դոզողում եր փակված ափում իմ:

— «Հին ընկերներ ենք, նույնիսկ... Հիշում եք...  
 մեկ անցեք մեզ մոտ, տղայիս տեսեք...»  
 Հեռվում կիտվում եր աշնան մուժը, մեզ,  
 ու մռայլվում եր մի պատկեր լուսե:

Յես ակումբ մտա կարդալուց բացի  
 ընկերներիս հետ շախմատ խաղալու...  
 Իսկ նա տուն գնաց լերեխալին՝ ծիծ,  
 ամուսնուն կերք ու կերակուր տալու:

Խորհրդագին արե, ալդակես հզոր  
ու հաղթական լենում ես,  
փոքրիկ կինը, վոր տեսա աւսոր,  
զեռ հին տան մեջ դեղնում ե:

Այսքան կամք, այսքան արէուն և ուժ  
բրտինք և մեր հոգին եք  
ըայց այն չորս պատերի մեջ մշուշ  
զեռ դեղնում և այն կինը:

Մեր ուժը նորի նոր կառուցման  
այնքան հզոր ե, վառ ե.  
բայց սրբել ներսը, ներսը հին տան  
այնքան գժվար, գժվար ե:

Միայն այս արել հաղթական,  
վոր հար ու հաստատ լենում ե,  
պիտի չորացնե գաղջ ողը այն տան,  
ուր փոքրիկ կինը դեղնում ե:





ՎԵՐՋԻՆ ԵԶ



## ՄԱՅՐԻ

Յես ապրում եմ այսոր, դու ապրում ես իմ մեջ,  
իմ մալքենի յերկիր, խորհրդացին իմ հող,  
ծաղկում ենք յես ու դու պայծառ վոսկեառեշ  
ու յեր ինձ իմ յերգում, քեզ եմ ասում ներբող:

Վորպես քնքուշ մանուկ լիրիքական, վճիռ՝  
հիմա փարվել եմ քեզ, ներսուական իմ մալը,  
ու աչքերիդ կապույտ, յերկնանման լճից  
պալծ ոռ մեր ապական ժապում և ինձ հիմա:

Ներսութիւնը քո մեր այս կյանքի վրա  
դնում ե կնիքն իր խոր ու անջընջելի...  
դարն ե փոխվում ահա իմ աչքերի առաջ,  
ու դու այսոր այն ես, ինչ վոր յերեկ չեցիր:

Դեռ իմ սրտի վրա կան անցյալի վերքեր,  
ասզբնառում են նրանք յերբեմն ասեղ-ասեղ,  
ու յերբ ուզում եմ քեզ սրտիս խորքից յերգել՝  
տխուր խոսքեր ել կան, վոր չի լինում չասել:

Բնդունիբ իմ յերգը, վորպես լաց ու ծիծագ  
ու թէ գտնում ես դու, վոր իմ լացից հիմար  
թշնամին մեր դավող պետք ե միայն ցընծա, —  
յեղիր սրտանց սիրող, յեղիր դաժան մի մալը:

Թող քո սերը լինի նույնքան խոր ու անզութ,  
ինչ վոր սերը այն մոր, վոր հիշեցի հանկարծ  
քո անցլալից և իմ, տարիներից այն մութ,  
հիմա այնքան հեռու մոխիբներում հանգած:

Տեսնում եմ յիս այն մոր աչքերը լի սիրով  
ու սարսափը աճող խլրառում և այնտեղ...  
Լությունը կլանք եւ Մահն և անցնում սրով:  
Լությունը կլանք եւ Զայնը՝ վախճան ահեղ...

Ու մահուկը զրկի հանկարծ ճըշում և սուր,  
ով դիտե ինչ ցավի, կամ խնդության համար...  
Յեվ մալրական ձեռքը համբուրելի ու սուրը  
նրան խեղդում և սև դահճի ողի նըման:

Մահը անցնում է կույր, ու վայրկլաններն ահեղ  
հաջորդում են իրար, զեպի կլանքը սահում...  
Մալրը սրառում թող իր կոկիծները պահե,  
այնքան կլանքեր փրկեց մի մահուկի մահով...

Խորհրդալին լերկիր, թեե ահի-մահի  
վոչ մի տափնապ չունես, հիշած այն մոր նման,  
թշնամիները բացց կան դաժան ու դիվալին,  
վոր մաղիլներ սրած քեզ են դավում հիմա:

Ու յեթե իմ յերզը նրանց արնոտ դընչին  
կարող և տալ թեկուզ մի չարիմաստ ժըպիտ, —  
քո մալրական ձեռքով, — յերբ իմ ձայնը հնչի, —  
անմեղ իմ կոկորդը դաժանորեն հողիր:



## ՎԵՐՋԻՆ ՅԵՐԳ

Ուրախ գրված գրքեր կան,  
վոր կարգում եմ ու տիսրում...  
բասեր անկանք ու ներկած,  
խաղալիքի պես փխրուն:  
Նալում են քեզ թերթերից  
(ցուցափեղից խանութի)  
ժպտուն մարդիկ, միշտ թերի,  
(պուպրիկների պես անթիվ):

Ուրախ ե նա... թե նույնիսկ  
սիրտը պոկեն կրծքի տակ,  
զարձալ... վորպես «կոմունիստ»  
պարտավոր ե նա խնդալ...  
Մարդը տեսնել անարցունք  
դա էրազ և դեռ վսեմ,  
վոր զիութում ե, հիացնում  
գալիքներից մեր լուսե...

Հիմա մարդը... դեռ ունի  
և խնդություն, և արցունք,  
քրտընքի և արցունքի  
բլուր հուգերի ծովացում...  
Ու այս գրքում, ընթերցնող,  
լիթե տեսար դու կրկին  
լոկ պուպրիկներ խնդացող, —  
զիրքս հանձնիր կրակին:





ՑԱՆԿ

ՅԵՐԳԵՐ ՄԱՀԻ ՄԱՍԻՆ

Եջ

1. Պայքար . . . . .	5
2. Տողերիս դասակներով . . . . .	9
3. Աբեխն . . . . .	10
4. Վ. Տերյանին . . . . .	11

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ

5. «Ինքներգություն» . . . . .	15
6. Անցման յերգ . . . . .	16
7. Մռացում . . . . .	18
8. Շիլը . . . . .	19
9. «Խուժանական» . . . . .	20
10. Մանուկները . . . . .	22
11. Բարդիները . . . . .	25
12. Բեղմնավորում . . . . .	28
13. Շռայլություն . . . . .	29
14. Հղիություն . . . . .	30
15. Զմեռային . . . . .	31

ԱՐՑՈՒՆ ՅԵՎ ՔՐՏԻՆՔ

16. Յերգն առաջին . . . . .	41
17. Մարմնավորում . . . . .	43
18. Լալիս և պառավ մի . . . . .	44
19. Մռւտք . . . . .	45
20. Յերգ հողի մասին . . . . .	50
21. Լուսատոն . . . . .	52
22. Բեռը . . . . .	53

<b>23.</b>	<i>Լիրիկա</i>	54
<b>24.</b>	<i>Ցերպեր առավոտյան</i>	55
<b>25.</b>	<i>Ցերպ խնդության</i>	59
<b>26.</b>	<i>Աճում</i>	61
<b>ԿԱՐՄԻՐ ԼՈՉԱԿՆԵՐ</b>		
<b>27.</b>	<i>Սերը</i>	65
<b>28.</b>	<i>Գարնանային</i>	67
<b>29.</b>	<i>Նամակ</i>	70
<b>30.</b>	<i>Հեքյաթը</i>	74
<b>31.</b>	<i>Թըոջու լաշտկը</i>	76
<b>32.</b>	<i>Կարմըալաչակները</i>	78
<b>33.</b>	<i>Փոքրիկ պոեմմի փոքրիկ կնոջ մասին</i>	82
<b>ՎԵՐՋԻՆ ԵԶ</b>		
<b>34.</b>	<i>Մայրը</i>	91
<b>35.</b>	<i>Վերջին յերգ</i>	95



ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ

1	εργάτης	λέγειν	πολύτελος
2	απομείνειν	πολύτελος	πολύτελος
2	πολύτελος	πολύτελος	πολύτελος
3	γέρων	πολύτελος	πολύτελος
4	πολύτελος	πολύτελος	πολύτελος
4	πολύτελος	πολύτελος	πολύτελος
4	πολύτελος	πολύτελος	πολύτελος
5	πολύτελος	πολύτελος	πολύτελος
5	πολύτελος	πολύτελος	πολύτελος
6	πολύτελος	πολύτελος	πολύτελος
6	πολύτελος	πολύτελος	πολύτελος
8	πολύτελος	πολύτελος	πολύτελος
9	πολύτελος	πολύτελος	πολύτελος
9	πολύτελος	πολύτελος	πολύτελος

ԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028901

ԳԻՒԾ՝ 75 ԿՈՎ.

28901

ՄԵԿ  
օրինակ

ВАГАРШАК НОРЕНЦ  
ВТОРАЯ КНИГА  
ГИЗ ССР АРМЕНИИ 1930 ЭРИВАНЬ